ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/70

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից 13.06.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/70 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Տելիա-Մեդ» ՓԲԸ -ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 13.06.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար «վիրաբուժական թելերի» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Գնման առարկայի համար նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝

Հ/հ	Ապրանքի անվանում	Տեխնիկական հատկանիշներ
1.	Սինթետիկ չներծծվող մոնոֆիլամենտ վիրաբուժական կարանյութ պատրաստված պոլիպրոպիլենից 2-0	Թել ստերիլ վիրաբուժական, սինթետիկ, չներծծվող, մոնոֆիլամենտ պատրաստված է պոլիպրոպիլենից: Թելը ներկված է երկնագույն կամ այլ կոնտրաստային գույնի վերքի մեջ լավագույն տեսանելիություն ապահովելու համար: Ասեղը կոռոզիակայուն բարձր ամրության համաձուլվածքն ունի հետևյալ մետաղական կազմը՝ համապատասխան տոկոսային հարաբերակցությամբ՝ երկաթ ոչ ավել 73%, քրոմ ոչ պակաս 12%, նիկել ոչ պակաս 10%, մոլիբդեն ոչ պակաս 3%, տիտան և տանտալ ոչ պակաս 2%: Համաձուլվածք պատված է սիլիկոնով, որը նվազեցնում է շփումը հյուսվածքների և ասեղի միջև: Ասեղի նյութերը և կառուցվածքը ապահովում են բարձր կայունություն անդարձելի դեֆորմացիայի նկատմամբ՝ ոչ պակաս քան 4,6 Н/см, որը կանխում է ասեղի փոխելու անհրաժեշտությունը: Թելի միացումը ատրավմատիկ ասեղին ամուր է, ասեղի տրամագիծը թելին միացման մասում ոչ ավել քան 1,15 անգամ, որի շնորհիվ նվազում է հյուսվածքների տրավմատիզացիան ասեղի անցնելու ժամանակ: Ասեղի և թելի տրամագծի մինիմալ տարբերությունը ապահովվում է լազերային գայլիկոնման կամ այլ մեթոդով:Եզակի անհատական ստերիլ փաթեթավորում, որը հնարավորություն է տալիս հասնելու ներքին ներդիրին մեկ շարժման միջոցով: Ներքին միջադիրը պաշտպանում է թելը և ասեղը վնասվելուց (պլաստիկ կամ այլ ամուրնյութ), ապահովում է թելի գծայնությունը տուփից հանելուց հետո կանխելով "ձևի

		հիշողության" էֆֆեկտի առաջացումը, պարունակում է ամբողջական ինֆորմացիա թելի անվանման բաղադրության, պարամետրերի ինչպես նաև ասեղի պարամետրերի վերաբերյալ, որը հնարավորություն է տալիս վերահսկել պարունակությունը անհատական տուփից հանելուց և ստերիլ վիրահատական սեղանի վրա դնելուց հետո: Ասեղը ծակող՝ 31 +/- 1 մմ, թելի երկարությունը՝ ոչ պակաս 75 սմ:
		- Ապրանքները պետք է ունենան 1. Արտադրողի միջազգային հավաստագրի /ISO, GMP, EC կամ այլ/ և /կամ/ արտադրող պետության համապատասխան լիազոր մարմնի կողմից տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման հավաստագիր, որի պատճենը ներկայացվում է մատակարարման ժամանակ: 2. Արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի)՝ կողմից տվյալ ապրանքի /ապրանքատեսակների խմբաքանակի/ համապատասխանության և (կամ) որակի հավաստագիր (ներկայացվում է մատակարարման ժամանակ): 3. Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ապրանքատեսակները հանձնման պահին պետք է ունենան առնվազն պիտանելիության ժամկետի 1/2-ը: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետիով նախատեսված ցանկացած հղման դեպքում

		կիրառելի է «կամ համարժեքը» արտահայտությունը: Ապրանքները պետք է մատակարարվեն ք. Աբովյան, Արզնու խճուղի, Կենտրոնական Դեղաբազա:

Ընկերությունը մասնակցել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» գնման ընթացակարգին, որի արդյունքում ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են Ընկերության կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում առկա է երկու բնույթի անհամապատասխանություն՝

1. Ապրանքի նկարագրին վերաբերող,

2. Հարցման հիման վրա լիազոր մարմնից պարզվել է, որ Ընկերության՝ հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հավեկշռային արժեքը գերազանցում է ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը:

Ընկերությունն անհամապատասխանությունների մասին ծանուցվել է էլեկտրոնային եղանակով՝ համաձայն 25.05.2018թ. ծանուցման:

Սահմանված ժամկետում Ընկերության կողմից թերությունները շտկվել են, սակայն համաձայն գնահատող հանձնաժողովի 04.06.2018թ. N 6 արձանագրության՝ վերը նշված երկրորդ թերությունը չի շտկվել, որի պատճառով Ընկերության ներկայացրած փաստաթղթերը գնահատվել են հրավերի պահանջներին չհապատասխանող և հայտը մերժվել է:

Որպես մերժման հիմք՝ արձանագրության մեջ նշված է, որ Ընկերությունը, որպես անհամապատասխանության հիմնավորում (պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը չի գերազանցում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը), ներկայացրել է այնպիսի փաստաթուղթ, որտեղից չի երևում, թե որ ընկերությանն է վերաբերում:

Այսպիսով, գնահատող հանձնաժողովի մերժման միակ հիմքում դրված է այն, որ ոչ թե Ընկերության պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը գերազանցում է ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքին, քանի որ այդ փաստի բացակայությունը հիմնավորվել է ներկայացված փաստաթղթից, այլ այն, որ ներկայացված փաստաթղթից չի երևում, թե որ ընկերությանն է վերաբերում:

Հետևաբար, սույն բողոքի լուծման համար էական նշանակություն ունի հետևյալ հարցադրման պատասխանը՝ արդյոք գնահատող հանձնաժողովը կարող էր հայտը մերժել պարտավորությունների և ակտիվների հաշվապահական արժեքի բացասական տարբերության հիմքով միայն այն հանգամանքի ուժով, որ ներկայացված փաստաթղթից չի երևում Ընկերության անունը:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 63-րդ կետի՝ մասնակիցների «ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է երկու մասով՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Համաձայն Կարգի 43-րդ կետի՝

«43. Հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝

...

3) էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.»:

44. Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: ... Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

47. ... կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, ... գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ:...:»

Վերը նշված նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Ընկերությունը քննարկվող անհամապատասխանության շտկման հիմնավորման համար կարող էր գնահատող հանձնաժողովին ներկայացնել Կոմիտեից ստացված տեղեկատվությունը, ընդ որում, որևէ պահանջ, որ տվյալ տեղեկատվությունը պարունակող փաստաթուղթը պետք է հատուկ պարունակի Ընկերության անունը կամ այլ ձևով ներկայացվի, բացակայում է:

Անգամ, եթե գնահատող հանձնաժողովը որոշեր, որ պետք է պարզի, թե արդյոք Ընկերությանն է վերաբերում, թե ոչ ներկայացված փաստաթուղթը, նա կարող էր պահանջել փաստաթղթի բնօրինակը: Միակ պահանջն այն է, որ պետք է հիմնավորվի Կոմիտեից ստացված լինելը, որն էլ որ Ընկերության կողմից կատարվել էր սույն գործով:

«Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանության շտկման առանձնահատկությունը կայանում է նրանում, որ թերության շտկումը փաստացի տեղի է ունենում ոչ թե Մասնակցի կողմից փաստաթղթեր ներկայացնելով գնահատող հանձնաժողովին, այլ համապատասխան տեղեկատվությունը

մուտքագրելով ՀՀ պետական եկամուտների կոմիտե, որի բազայում կկատարվեն համապատասխան փոփոխություններ:

Հետևաբար, հնարավոր թերությունը (կամ թերությունը չշտկելը) կարող էր համարվել ոչ թե հիմնավորող փաստաթղթի վրա Ընկերության անվան բացակայությունը, այլ այն, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեում համապատասխան փոփոխությունը կատարված չլիներ:

Մինչդեռ, Ընկերության կողմից ներկայացված փաստաթուղթը կրում էր պետական եկամուտների կոմիտեի կնիքը (բոլոր դեպքերում, սույն բողոքին կից ներկայացվում է փաստաթղթի ամբողջական տարբերակը):

Հակառակ պարագայում, ստացվում է, որ Ընկերությունն իրականում բավարարում է հրավերի պահանջները, սակայն վերջինիս հայտը մերժվում է:

Կարգը, նման իրավիճակների համար սահմանում է ստուգման հնարավորություն՝ պարզելու մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթի՝ իրականության համապատասխանությունը: Մասնավորապես, Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: ... Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:»:

Միևնույն ժամանակ, Կարգը որևէ կերպ իրավունք չի տալիս գնահատող հանձնաժողովին ինքնուրույն որոշել, թե արդյոք ներկայացված փաստաթղթի տվյալները համապատասխանում են իրականության, թե ոչ, քանի դեռ չկա անհրաժեշտ տեղեկատվություն:

Փաստորեն, սույն գործով գնահատող հանձնաժողովը մերժման հիմքում դրել է, ոչ թե այն, որ փաստաթուղթ չի ներկայացվել, այլ այն որ Ընկերության անունը նշված չէ փաստաթղթում: Ընկերությունը շտկել է թերությունը՝ այդ փաստաթուղթը ներկայացնելով, բնականաբար, իր անունից և իրեն վերաբերող: Հետևաբար, գնահատող հանձնաժողովի մերժման որոշումը համազոր է Ընկերության կողմից փաստաթղթում ներկայացված տվյալը իրականությանը չհամապատասխանելու փաստը ճանաչելուն, որն ինչպես արդեն

իսկ նշվել է վերևում, կարող էր կատարվել միայն երրորդ անձանց կողմից ստացված տեղեկատվության հիման վրա կատարված հարցմամբ, որը չի կատարվել:

Ավելին, պետք է նշել, որ փաստաթղթի մյուս էջերը չէին ներկայացվել առկա տեղեկատվությունը կոնֆիդենցիալ պահելու նպատակով, հատկապես հաշվի առնելով այն, որ դրանք նշանակություն չեն կարող ունենալ գնահատող հանձնաժողովի համար և քարտուղարի հետ պայմանավորվածություն էր ձեռքբերվել, որ բնօրինակն ամբողջությամբ կներկայացվի նիստի ընթացքում, սակայն Ընկերությունն այդպես էլ չի ծանուցվել նիստի մասին և հնարավորություն չի ունեցել այն ներկայացնել:

Այսպիսով, գնահատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը, խախտել է Կարգի նշված դրույթները, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի հետևյալ նորմերը՝

«5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

7. Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:»:

Ընկերությունը բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. Դադարեցնել «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի հայտը հրավերի պահանջներին չհամապատասխանելու մասին 04.05.2018թ. թիվ 1.1 որոշումը.

2. Դադարեցնել «Մեգիէլ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին 04.05.2018թ. թիվ 1.2 որոշումը.

3. Ընդունել որոշում՝ «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և որպես բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին:

«Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 15.06.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 23.06.2018թ. թիվ ԴՎԱ/2253 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԶՈՒ ՌԲՎ կարիքների համար թվով 1 չափաբաժին վիրաբուժական թելերի գնման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել թվով 4 մասնակիցներ, այդ թվում՝ «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն:

Գնահատող հանձնաժողովի կողմից «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից և վերջինիս առաջարկվել է սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է մասնակցի ներկայացրած փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ներկայացված համապատասխան եզրակացությունը, որի արդյունքում պարզվել է, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

- Ներկայացված փաստաթղթերում բացակայում են նախկինում կատարած պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի՝ հանձնման-ընդունման արձանագրությունները կամ պայմանագրի կատարումն ընդունած կողմից գրավոր հավաստումը.
- Մասնակցի կողմից ներկայացված ընթացակարգի հրավերի 6.1 հավելվածով նախատեսված՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված է, որ ասեղն ապահովված է AISI 470 հատուկ համաձուլվածքով, սակայն նշված չէ համաձուլվածքի մետաղական կազմը՝ տոկոսային հարաբերակցությամբ, ինչը հնարավորություն չի տալիս գնահատել դրա համապատասխանությունը հրավերով նախատեսված պահանջներին (ընթացակարգի հրավերում հստակ նշված է ասեղի համաձուլվածքի բաղադրության մետաղական կազմի նվազագույն պահանջները).
- ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն՝ Ընկերությունը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, սակայն Ընկերության՝ հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը գերազանցում է ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը:

Հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել են շտկված փաստաթղթերը, որոնք ուսումնասիրվել են գնահատող հանձնաժողովի կողմից: Հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքի և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքի մասով Ընկերության կողմից ներկայացված փաստաթուղթը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է ոչ բավարար, քանի որ ներկայացված

փաստաթղթի բովանդակությունից պարզ չէ, թե ում կողմից է տրված և որ կազմակերպության տվյալներն է այն ներառում:

Հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և վերջինիս հայտը մերժվել է, միաժամանակ, սահմանված կարգի համաձայն Ընկերության տվյալներն ուղարկվել են ՀՀ ֆինանսների նախարարություն:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 15.06.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-ԱՄ-2018/70 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/70 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների 09.04.2018թ. հայտ է ներկայացրել «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի 14.05.2018թ. որոշմամբ «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 18.05.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմել է 198 799 991 ՀՀ դրամ, իսկ ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ 118 060 883 ՀՀ դրամ:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 25.05.2018թ. սահմանված կարգով Armeps համակարգի միջոցով ծանուցել է «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ին, հայտնելով որ Ընկերության կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, ինչպես նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի՝ Կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն՝ «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, սակայն Ընկերության հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը գերազանցում է ակտիվների հաշվեկշռային արժեքը, այսինքն «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի հայտը չի համապատասխանում հրավերի 2.5-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության պահանջներին:

Վերոհիշյալ ծանուցմամբ Ընկերությանն առաջարկվել է մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկել անհամապատասխանությունները:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.06.2018թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 6 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ քննարկելով «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից որպես «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի շտկում ներկայացված փաստաթուղթը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է գնահատել այն ոչ բավարար, քանի որ ներկայացված փաստաթղթի բովանդակությունից պարզ չէ, թե որ կազմակերպության տվյալներն է այն ներառում: Նույն արձանագրությամբ Ընկերության հայտը մերժվել է:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի 13.06.2018թ. բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.06.2018թ. թիվ ԴՎԱ/2253 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանութ-

յունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Նույն կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի 14.05.2018թ. որոշմամբ «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Միևնույն ժամանակ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա

համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե Ընկերության՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 18.05.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմել է 198 799 991 ՀՀ դրամ, իսկ ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ 118 060 883 ՀՀ դրամ:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, ինչպես նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի՝ Կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն՝ «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, սակայն Ընկերության հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը գերազանցում է ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps համակարգով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով շտկել վերոհիշյալ անհամապատասխանությունները:

Ընկերության կողմից որպես «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում արձանագրված անհամապատասխանության շտկում գնահատող հանձնաժողովին ներկայացվել է փաստաթուղթ, որում առկա է տեղեկատվություն ակտիվների և պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքների և հարկային

բազաների (հաշվետու տարվա վերջում) վերաբերյալ, միևնույն ժամանակ նշված փաստաթղթից պարզ չէ, թե ում կողմից է տրվել և ում վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.06.2018թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 6 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ քննարկելով «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից որպես «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի շտկում ներկայացված փաստաթուղթը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է գնահատել այն ոչ բավարար, քանի որ ներկայացված փաստաթղթի բովանդակությունից պարզ չէ, թե որ կազմակերպության տվյալներն է այն ներառում: Նույն արձանագրությամբ Ընկերության հայտը մերժվել է:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.5-րդ ենթակետի 3-րդ պարբերության «ա» կետի համաձայն՝ մասնակցին ներկայացվող «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը: Նույն կետի «բ» կետով սահմանվել է, որ սույն ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, որի իսկությունը հանձնաժողովը գնահատում է սույն հրավերով սահմանված պայմաններով:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 7-րդ կետի 7.13-րդ ենթակետի 3-րդ պարբերությամբ սահմանվել է, որ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝

հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ նույն կետով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Հրավերի 7.21 ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ

զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.20-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 18.05.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմել է 198 799 991 ՀՀ դրամ, իսկ ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ 118 060 883 ՀՀ դրամ: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով արձանագրել են անհամապատասխանություններ Ընկերության «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում, ուստի առաջնորդվելով Կարգի 47-րդ կետի դրույթներով, ծանուցվել է Ընկերությանը մեկ աշխատանքային օրյա ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ուսումնասիրելով՝ «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից որպես «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում արձանագրված անհամապատասխանության շտկում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացված փաստաթուղթը, գտնում եմ, որ Ընկերությունը չի շտկել անհամապատասխանությունը, քանի որ ներկայացված փաստաթղթից պարզ չէ, թե այն ում կողմից է տրված և որ կազմակերպության վերաբերյալ: Գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովը նշված փաստաթուղթը չէր կարող դիտարկել որպես ներկայացված անհամապատասխանության շտկում, քանի որ Կարգի 47-րդ կետի իմաստով այն չի կարող դիտարկվել որպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվություն կամ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվություն: Ընկերությունը ԳԲԽ-ԱՄ-2018/70 բողոքի քննության շրջանակներում ներկայացրել է գնահատող հանձնաժողովին որպես շտկում ներկայացված փաստաթղթի ամբողջական տարբերակը, որն իրենից ներկայացնում է «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացված՝ ռեզիդենտների շահութահարկի հաշվարկ: Մինչդեռ Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել կոմիտեից ստացված գրավոր

տեղեկատվության կամ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվության հիման վրա, իսկ տվյալ դեպքում չնայած այն հանգամանքին, որ հաշվետվության վրա առկա է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 20 բաժնի կնիքը, այնուամենայնիվ, այն հանդիսանում է Ընկերության կողմից ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հաշվետվություն, այլ ոչ թե կոմիտեից ստացված տեղեկատվություն:

Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով՝ գտնում եմ, որ մերժելով «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի հայտը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է իրավաչափ և առաջնորդվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի, ինչպես նաև հրավերի ՄԱՍ I-ի 7-րդ կետի 7.21 ենթակետի պահանջներով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի 13.06.2018թ. բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ գնահատող հանձնաժողովի գործողություններն իրավաչափ են եղել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Տելիա-Մեդ» ՓԲԸ-ի կողմից 13.06.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**